

Ձեր առողջական տեղեկության ապահովումը

Ձեր առողջական տեղեկության ապահով մթերման համար մենք կը հետեւինք կառավարական խիստ չափանիշներու՝ բոլոր ձեռագրերով: Մենք կանոնադրաբար կը բարելաւենք եւ կը ստուգենք մեր համակարգերը որպէսզի պաշտպանենք Ձեր տեղեկութիւնը շիագործած անձերու կողմէ օգտագործուելէ, կորուստէ կամ այլ չարաշահութենէ:

ՆՍՈՒ հանրային առողջապահական սպասարկութիւնները՝ առողջական տեղեկութիւնները կը պահեն որպէս թղթային արձանագրութիւն, տեղական ելեքտրոնային բժշկական արձանագրութեան համակարգերուն մէջ եւ ՆՍՈՒ HealtheNet -ին մէջ:

HealtheNet - ը ՆՍՈՒ հանրային առողջապահական սպասարկութեան կողմէ օգտագործուող ապահով պետական ելեքտրոնային արձանագրութիւն է:

HealtheNet - ը կը պարունակէ Ձեր առողջական տեղեկութեան ամփոփումը, օրինակի համար, Ձեր արձակման ամփոփագիրները, ախտաբանութեան եւ ախտորոշման քննութեան արդիւնքները եւ դեղորայքի տեղեկութիւն:

Եթէ ՆՍՈՒ-ի մէջ որեւէ տեղ հանրային առողջապահական սպասարկութեան մը յաճախէք, շատ մը պարագաներուն այս ամփոփ տեղեկութիւնը տրամադրելի պիտի ըլլայ ձեզ բուժող անձնակազմին՝ HealtheNet - ի միջոցով:

My Health Record (Իմ Առողջական արձանագրութիւնս)

My Health Record - ը Աւստրալիոյ ազգային թուային առողջութեան արձանագրութեան համակարգն է: Բոլոր Աւստրալիացիները ունին My Health Record, բացի եթէ ընտրէք չունենալ:

Եթէ յաճախած էք ՆՍՈՒ հանրային առողջապահական սպասարկութիւն մը, Ձեր առողջական տեղեկութիւնը պիտի ուղարկուի Ձեր My Health Record -ին: ՆՍՈՒ հանրային առողջապահութեան անձնակազմը եւս կրնայ տեսնել, եւ ուղարկել տեղեկութիւն՝ Ձեր My Health Record - ին:

Եթէ ունիք My Health Record մը, եւ չէք ուզեր որ յատուկ բժիշկի մը ժամադրութեան կամ հիւանդանոց այցելութեան մասին Ձեր տեղեկութիւնը ներառուի My Health Record - ին մէջ, Ձեր այցելութեան սկիզբը, պէտք է տեղեկացնէք ձեզ բուժողին:



Health

Յաւելեալ տեղեկութեան համար հեռաձայնել My Health Record, հեռախօս՝ 1800 723 471, կամ դիմել հետեւեալ կայքէջին www.myhealthrecord.gov.au

Հաղորդակցեցէք մեզի հետ

Եթէ հարցումներ ունիք կամ գանգատ մը Ձեր առողջական տեղեկութեան խորհրդապահութեան մասին, կը խնդրենք դիմել Privacy Contact Officer - ին (Խորհրդապահութեան Կապի Պաշտօնեային)՝ ՆՍՈՒ - ի Առողջապահութեան գործակալութեան մէջ, ուր կը պահուի Ձեր առողջական տեղեկութիւնը:

Privacy Contact Officer - ի մանրամասնութեանց համար կը խնդրենք դիմել հետեւեալ կայքէջին www.health.nsw.gov.au/patients/privacy/Pages/privacy-contact.aspx

Գրաւոր եւ Բանաւոր Թարգմանութեան սպասարկութիւն

Եթէ վերոյիշեալ սպասարկութիւններուն հետ հաղորդակցելու օգնութեան կամ թարգմանութեան կարիքը ունիք, կը խնդրենք հեռաձայնել Գրաւոր եւ Բանաւոր Թարգմանութեան Սպասարկութեան (TIS) 13 14 50 թիփին:

Ուրիշ լեզուներով խորհրդապահութեան տեղեկութեան թերթիկի համար այցելեցէք՝ Multicultural Health Communication Service հետեւեալ կայքէջին www.mhcs.health.nsw.gov.au

Armenian

Privacy Leaflet for Patients How we protect your health information

Խորհրդապահութեան Թերթիկ՝ Հիւանդներու համար

Մենք ինչպէ՞ս կը պաշտպանենք Ձեր առողջական տեղեկութիւնը



Health

Ձեր առողջության մասին տեղեկության հաւաքագրում

Ձեզի համապատասխան բուժում մատակարարելու համար՝ մենք ձեր մասին կրնանք հաւաքել շարք մը առողջական տեղեկություններ: Այս կրնայ ներառել ձեր առողջության վերաբերեալ տեղեկություն, ձեր ախտաբանական եւ ախտորոշիչ քննութեան արդիւնքները, շողարձակումի նկար (x-ray) եւ այլ նկարներ, նաեւ ձեր դեղորայքի վերաբերեալ տեղեկություն:

Որ որ կարելի է, ձեր առողջութեան մասին տեղեկութիւնը ուղղակի ձեզմէ կը քաղենք: Եթէ այս կարելի չէ, կամ արտակարգ իրավիճակի պարագային, մենք կը դիմենք ձեր նախկին առողջական վիճակի մասին արձանագրութիւններուն, այլ առողջապահական հոգատարութիւն հայթայթողներուն եւ ձեր My Health Record - ին (Իմ Առողջական Արձանագրութիւնս):

Կրնայ նաեւ անհրաժեշտ ըլլալ տեղեկութիւն քաղել ընտանիքի անդամէ մը, բարեկամէ, հոգատարէ կամ անձէ մը, զոր օրինակ թարգմանիչէ մը՝ որ կրնայ օգնել մեզի ձեր առողջութեան համար համապատասխան հոգատարութիւն տրամադրելու:

Ձեր առողջական տեղեկութեան օգտագործում կամ յայտնութիւն

Ձեր առողջական տեղեկութիւնը կրնայ օգտագործուիլ Ն. Ս. Ու.-ի հանրային առողջապահութեան սպասարկութեան կողմէ, կամ յայտնուիլ առողջապահութեան սպասարկութենէն դուրս, որպէսզի կարելի ըլլայ համապատասխան խնամք եւ բուժում տրամադրել ձեզի:

Օրինակի համար, ձեր տեղեկութիւնը կրնայ օգտագործուիլ կամ յայտնուիլ հետեւեալ ձեւերով...

- Ձեր առողջութեան հոգատարութեան մէջ ընդգրկուած տարբեր առողջապահական սպասարկութիւններու, հիւանդանոցներու կամ բժշկական մասնագէտներու:
- Ձեր նշանակած բժիշկին, ներառեալ ձեր արձակման փաստաթուղթերուն հետ տրուած յանձնարարուած տեղեկութեան:
- Ն.Ս.Ու.-ի Շտապօգնութեան Սպասարկութեան:
- My Health Record - ին:
- Ձեզի հետ հաղորդակցելու տունը՝ յետագայ ժամադրութիւններու համար:
- Ձեր հոգատարին՝ ձեր խնամքին վերաբերեալ աջակցութեան համար:

- Ձեզի հետ կապուիլ՝ ձեր ստացած ծառայութեան մասին ձեր կարծիքը առնելու համար:
- Հովուական խնամք տրամադրողներուն, ներառեալ հիւանդանոցի հոգետրականներուն, որոնք հոգեկան եւ հովուական խնամք կը տրամադրեն:
- Ուսանողներու, եւ այլ պաշտօնեաներու՝ մարզումի նպատակով:
- Այլ առողջապահական սպասարկութիւններու եւ լիազօրուած երրորդ մարմիններու՝ անձի մը կենսքին, առողջութեան կամ բարօրութեան լուրջ եւ անմիջական սպառնալիք մը կանխարգելու համար, զոր օրինակ արտակարգ իրավիճակի պարագային:
- Մարմնի գործարաններու կամ հիւսուածքներու նուիրատուութեան վերաբերեալ նպատակներու համար: Այս կրնայ ներառել հարազատի հետ կապի մանրամասնութիւններ:
- Գործառական եւ կառավարման գործունէութեան համար, ներառեալ հատոյթ, ծրագրում, ապահովութիւն եւ որակի բարելաւում:
- Բողոք մը կամ միջադէպ մը հետաքննելու համար:
- Հիւանդին կողմէ առողջապահութեան սպասարկութեան դէմ ներկայացուած իրաւական գործողութիւն մը կամ պահանջ մը կառավարելու:

Եթէ չէք փափաքիր որ մենք ձեր մասին որոշ տեղեկութիւններ հաւաքենք, օգտագործենք կամ յայտնենք, դուք պէտք է ըսէք մեզի, եւ մենք ձեզի հետ կը քննարկենք որեւէ հետեւանքներու մասին որոնք կրնան ազդել ձեր առողջութեան հոգատարութեան:

Օրէնքը եւ կը թույլատրէ կամ կը պահանջէ որ ձեր անձնական առողջութեան մասին տեղեկութիւնը յայտնուի երրորդ մարմինի մը, օրինակի համար...

- Կանոնագրային տեղեկատուութեան նպատակներով՝ Պետական եւ Հասարակապետական կառավարական գործակալութիւններու, ինչպէս օրինակ, տեղեկացնելու փոխանցիկ հիւանդութիւններ, քաղցկեղ եւ այլ ազդարարուելիք հիւանդութիւններ, տեղեկացնելու ծնունդներ եւ մահեր, եւ հայթայթելու Մետիքերի մանրամասնութիւնները:
- Human Research Ethics Committee – ի մը կողմէ հաստատուած հանրային շահագրգռութիւն ներկայացնող հետազօտական ծրագիրներ հետապնդողներու:
- Այլ առողջապահական սպասարկութիւններու կամ օրինապահ գործակալութիւններու, զոր օրինակ ոստիկանութեան՝ եթէ լուրջ ոճիրի մը կապակցութեամբ մեզի տեղեկութիւն հայթայթէք, ներառեալ լուրջ յարձակում, ընտանեկան բռնութիւն կամ երեխայի չարաշահում:

- Այլ գործակալութիւններու՝ երբ տեղեկութիւնը կը վերաբերի երեխայի մը կամ երիտասարդ անձի մը բարօրութեան կամ բարեկեցութեան:
- Ենթարկուելով դատակոչութեան կամ փնտռուիքի հրամագրի՝ եթէ ձեր առողջութեան վերաբերեալ տեղեկութիւնը կը պահանջուի որպէս վկայութիւն դատարանի մէջ:

Ազգային Հաշմանդամութեան Ապահովագրութեան Ծրագիր (NDIS)

Եթէ դուք, կամ ձեր կողմէն մէկը մեզի տրամադրէ ձեր NDIS Ծրագրին պատճէնը կամ այլ NDIS -ի փաստաթուղթեր, մենք կրնանք օգտագործել կամ յայտնել այս տեղեկութիւնը՝ ձեր առողջական հոգատարութեան եւ ընկերային ծառայութիւններուն առնչուած նպատակներու համար: Այս կրնայ ընդգրկել տեղեկութեան փոխանակում այլ կառավարական գործակալութիւններու, անձնական հատուածի կամ ոչ-կառավարական կազմակերպութիւններու հետ, օգնելու համար առողջապահական եւ ոչ-առողջապահական սպասարկութիւններուն՝ բաւարարելու ձեր կարիքները:

Մատչելիութիւն ձեր տեղեկութեան

Դուք իրաւունք ունիք պահանջել տեսնելու մեզ մօտ պահուած ձեր առողջական վիճակի տեղեկութիւնը: Սովորաբար, տեսնելու համար ձեզմէ կը խնդրուի գրաւոր դիմել եւ ինքնութեան փաստաթուղթ ներկայացնել: Եթէ ձեր առողջական վիճակի մասին արձանագրութեան պատճէններ ուզէք՝ ձեզմէ վճարում կրնայ պահանջուիլ: Տեղեկութեան տրամադրելիութեան խնդրանքներուն կը պատասխանենք կարելի եղածին չափ շուտով, եւ շատ մը պարագաներուն՝ մինչեւ 28 օր:

Ձեր անձնական տեղեկութեան տրամադրելիութիւնը կրնայ մերժուիլ յատուկ պարագաներու տակ, օրինակ երբ տրամադրելիութեան պարագային ձեզի կամ այլ անձի մը մտային կամ ֆիզիքական վնասի վտանգ կը սպառնայ:

Եթէ կը կարծէք որ ձեր մասին մեր ունեցած տեղեկութիւնը սխալ է կամ սխալ ձեւով գրուած է, կը խնդրենք որ մեզ տեղեկ պահէք եւ մենք պիտի ուղղենք ասիկա կամ նշում մը պիտի նօթագրենք ձեր առողջական տեղեկութեան վրայ:

Ձեր առողջական արձանագրութիւնը տեսնելու խնդրանքները պէտք է ուղղուին Medical Records Department կամ ձեր յաճախած առողջապահական սպասարկութեան տնօրէնութեան: